



Տարեկան . . 12 Ձր.  
Վեցամսեայ . . 6 "   
  
ԱՐՏԱՍԱՀԱՅՄԱՆ  
Երկու քիւ մեկ ծրարով  
Տարեկան . . 14 Ձր.  
Վեցամսեայ . . 7 "   
  
ԱՄԵՐԻԿԱ  
Տարեկան 2.60 Տօյր  
Վեցամսեայ 1.50 "   
Կ Ա Ն Խ Ի Կ



# Լ Ր Ա Պ Ի Ր

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Rev Pere G. Kalemkarian Mchitaris  
de Nagasce N 4 Vienne



Հ Ա Ս Յ Ե  
Rédaction du journal  
„Iravounk“  
VARNA (Bulgarie)  
Редакция  
на ВѢСТНИКЪ  
„Иравункъ“  
ВАРНА (България)  
Գրոշքիշեր եւս  
չեն տրոշիր

### ՕՐԻՆԱԿ ԹՈՂ ԱՌՆԵՆ ՀԱՅ ԿԻՆԵՐԸ

Գործակալութեանս (\*) իտալերէն  
հիւղին ստացած թերթերուն մէջ  
հետեւեալ խիստ հետաքրքիր լուրը  
կը կարդանք, որուն վրայ՝ մաս-  
նաւոր կերպով կը հրաւիրենք հայ  
կիներու ուշադրութիւնը:

— Նեապոլիսի՝ Նոյնրա գիւղին  
ապրող Մատտալէնա կրանաթա-  
անուն կնոջ ինպատար հանրագրու-  
թիւն մը կը պատգնեն Նեապոլիսի  
և շրջակայ վայրերուն մէջ: Հան-  
րագրութեան ստորագրողները կա-  
ռավարութեան (իտալական) կը  
խնդրեն, Մատտալէնա կրանա-  
թաի՝ տարեկան 1,800 ֆրանք  
յատկացնել, մինչև անոր մահը:  
Այդ կինն այսօր իստուն և եօթ տա-  
րեկան է և անկարող է իր ապ-  
րուստը հայթայթելու:

Այդ պատկառելի կինը՝ կենացը  
մէջ միայն տասն և ինը տարի ապ-  
րելով իր էրկանը հետ, աշխարհ  
բերեր է վաքստուն երկու զաւակ,  
որոց իստուն և ինը՝ մանչ և երեքը՝  
աղջիկ:

Ինը տարուան մէջ տասն և մէկ  
անգամ իրարու վրայ, այդ կինը,  
ծներ է երեք երեք զաւակ, երեք  
անգամ ծներ է չորս մանչեր միան-  
գամայն, և մէկ անգամ աշխարհ  
բերեր է հինգ մանչ և մէկ աղջիկ  
միանգամայն: Իսկ տասներկու ան-  
գամ նա աշխարհ բերեր է 12 ե-  
րեխայներ՝ անհատապէս, թէպէտ  
իրարու շատ մօտիկ ժամանակա-  
միջոցով:

Ահաւասիկ ձեզ ամէն տեսակե-  
տով յարգանաց արժանի կին մը  
որ իր կեանքին մէջ իր արտադ-  
րողի դերը կատարեր է ոչ միայն  
խղճմտանքով, այլ և պարզապէս  
գմայլելի կերպով: Եւ ահա ասոր  
համար է որ Նեապոլիսի ժողովուրդն  
իրար անցած է միջամտելու որ ի-  
տալական կառավարութիւնը վար-  
ձատրէ այդ իր տեսակին մէջ ան-  
զուգական հերոսուհին:

Եթէ մեր պատմութեան միջին

(\*) Բարեգի Էսթ-Ուեսթի գործակա-  
լութիւնը:

դարերու անցուդարձերը յիշե՛ք  
ու երեւակայութեամբ մեր աչքե-  
րուն առջեւ պատկերացնենք այն  
հազար ու մէկ ճակատամարտերը,  
պատերազմներն ու ընդհարում-  
ներն, որոց մասնակցեցաւ մեր  
ցեղը, եթէ մտաբերենք այն հըս-  
կայական կռիւները զորս մզեց հայ  
ցեղը՝ աշխարհի պատմութեան ա-  
մենահին ժամանակներէն՝ Տրոյա-  
դայի պատերազմէն սկսած մինչև  
նորագոյն թուրք բռնակալները:  
Եթէ խորհնք այն ճակատամարտ-  
ներուն վրայ զորս հայ ազգը Պար-  
սիկներու, Ասորեստանեայց, Պար-  
թեաներու, Եգիպտացւոց, Ասոր-  
ւոց, Հռովմայեցւոց, Յունաց, Ա-  
րաբներու, Մոնղոլներու և հազար  
ու մէկ մեծ ու պզտիկ ցեղերու  
հետ ունեցաւ, եթէ մտածենք թէ  
հպարտ և գոռացող Հռովմայի հա-  
զարաւոր լէգէոններով և հպար-  
տագոյն զօրավարներով, տասնեակ  
տարիներ պատերազմելով, հազիւ  
կրցաւ Հայաստանի մէկ շնչին մա-  
սին տիրել և մնացած մասերուն  
միապետն իբր թագաւոր ընդու-  
նիլ կամ ճանչնալ, ու այդ կէս  
յաղթութեան համար Հռովմայ մէջ  
արձան կանգնեցնել տուաւ—ինք-  
զինքը տիեզերքի տէր կարծող  
Հռովմը, եթէ մտածենք թէ Հռովմ-  
Հայկական պատերազմին առթիւ  
Հռովմայ Սենատի ամենայայտնի  
տրիբունները ահագին ճառեր խօ-  
սեցան. եթէ յիշենք թէ քնքուշա-  
խօս Յոյները և մեղկացած Բիւ-  
զանդեան կայսրները՝ հակառակ  
իրենց դրկիցութեան, չը կրցան  
Հայերը նուաճել... Այս բոլոր  
նկատողութիւններէն երկու եկրա-  
կացութիւն կարելի է հպնել, ա-  
ռաջին՝ թէ Հայերը խիստ բազ-  
մամարդ ազգ մը կը ներկայացնէին,  
անթիւ բանակներու դէմ պատկա-  
ռելի զնդեր հանելու համար, երկ-  
րորդ՝ թէ հայ ցեղը առաջնակարգ  
ժնդարներ մը բազմածին մը ե-  
ղած է:

Յիշաւի մեր հին պատմութեան  
մի քանի էջերուն համեմատ, հայ  
ազգը իր ամենափայլուն շրջաննե-  
րուն մէջ առնուազն 25-30 միլիոն  
ժողովուրդ ունեցող պետութիւն մը  
կը ներկայացնէր: Եւ այդքան ալ  
պէտք էր լինէր, քանի որ մի քանի

անգամ հարկը հազարներով զօ-  
քեր պատերազմի դաշտը հանեց:

Բայց այն երանելի ժամանակ-  
ներն անցան, աւա՛ղ, աննկա-  
րագրելի պատուհասներ հասան  
մեր ցեղի գլխուն, պատերազմ,  
գերեզմարութիւն, կոտորած, հըր-  
դեհ, երկրաշարժ և այլ նմանը չը  
տեսնուած արկածներ ու պատա-  
հարներ, բռնի կրօնափոխութիւն-  
ներ, անդադար գաղթելու հա-  
կում, եւն. եւն. մեր ցեղին մուխը  
մարեցին, անոր արիւնը ծծեցին  
ու ցամքեցուցին: Դեռ նոր՝ կեն-  
դանի ճիւղի մը հրամանով, երեք  
հազար հազարէ աւելի Հայեր ան-  
հետացան, մօտ կէս միլիոն այրի-  
ներ, որբեր և սովեալներ թողլով,  
ամառացած, անմարդացած, քան-  
դուած բայց դարձեալ մեզ հա-  
մար՝ երեք չորս անգամ սրբազ-  
նագոյն մեր հայրենի հողին վրայ...

Բայց այդ ահագին հարուածէն  
մենք վհատելու թուինալու չենք,  
մեր ցեղը խիստ շատ անգամ,  
դժբախտաբար, այդպիսի հար-  
ուածներ կրած է, բայց ամենուն  
տակէն ելած է յաղթական, միշտ  
յարատեւող, միշտ կանգուն...  
Յիշենք իբր օրինակ վարդանի  
ժամանակները, աւելի մօտակայ  
ժամանակներու մէջ Շահ-Աբասի  
գործերը, Ճինկիզ խանի, Լէնկ-  
թիմուրի արշաւանքները... Այդ  
բոլոր արշաւողները, բռնակալ-  
ները կարծեցիկ թէ հայ ցեղը,  
հայ ազգը ոչնչացուցին, անհետա-  
ցուցին. բայց եթէ այսօր իրենց  
գերեզմանէն դուրս գալու լինէին  
պիտի տեսնեն թէ չարաշուք սխալ-  
ուած են... Եթէ հայ ցեղը միւ-  
շու օրս կրած պատուհասներէն չէ  
մեռած, չէ ոչնչացած, նա ասկէ  
իստոյ այլեւս բնաւ երբէք չանհե-  
տանար, որովհետեւ նա իր աչքը  
բացաւ...

Գալով հայ ազգին կրկին բազ-  
մատալուն. այդ կախում ունի հայ  
կիներէն և երիտասարդներէն, Օ՛ն,  
տիկիներ, եթէ կը սիրէք ձեր  
հայրենիքը, եթէ կը սիրէք ձեր  
ցեղը՝ որուն պատկանելիք ձեր

ամենամեծ փառքը լինելու է, ե-  
թէ կուզէք որ հայ ազգը նորէն  
տասնեակ միլիոններով հաշուի,  
նմանեցէք վերոյիշեալ իտալուհի-  
ոյն և ազգին տուէք, շատ, խիստ  
շատ զաւակներ, մեռնողներուն տեղ  
տասնապատիկը, հարիւրապատիկը  
տուէք ազգին: Մեր արդի կա-  
ցութեան մէջ, այդ ձեր ամենա-  
սուրբ և ամենանուիրական պար-  
տականութիւնն է առաւել քան եր-  
բէք:

Մեղիք Ս. Դաւիթ-Բեկ  
Բարեգ, 19 Ապրիլ 1902

### ԽԱՂԱՊԻՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Եւրոպայի Հայ Ուսանողաց կող-  
մէ Տ. Բիւրի Գիյառ պատուիրակ  
ղրկուած էր Մօնաքօի մէջ այս ամ-  
սոյ սկիզբը գումարուող խաղա-  
ղութեան համաժողովին, ուր 22  
ազգերու ներկայացուցիչներ հա-  
ւաքուած էին:

Իրաց ներկայ վիճակը քննող  
յանձնախումբը Հայոց կացու-  
թեան մասին Տ. Գիյառի բացատ-  
րութիւնները լսելէ յետոյ միա-  
ձայնութեամբ անոր պաշտօն տուաւ  
հետեւեալ որոշումը ժողովին ներ-  
կայացնելու պաշտպանել:

«Խաղաղութեան տիեզերական  
ԺԱ. համաժողովը՝ Թ. և Ժ. հա-  
մաժողովներու բաղձանքը վե-  
րանորոգելով, կը խնդրէ ստիպո-  
ղաբար Պերլինի դաշնագիրը ստո-  
րագրող պետութիւններէն, Հա-  
նէյի մէջ պաշտօնական դեսպա-  
ժողով մը գումարել, հայկական  
խնդիրը լուծելու համար, 1895  
մայիս ամսոյ բարենորոգմանց ծը-  
րագրին գործադրութեամբը:

«Սասուն գաւառին մէջ նոր կո-  
տորածներ պատահելու երկիւղը  
ինկատի առնելով, նոյն պետու-  
թիւններէն կը խնդրէ Մուշ զըր-  
կել շրջակայ քաղաքներու իրենց  
հիւպատոսները, որովհետեւ եւ-  
րոպացի պաշտօնական վկաներու  
ներկայութիւնը միայն բաւական  
է արեւմտեան դէպքերու վերա-  
դարձը արգելելու:»

Այս առաջարկութիւնը Համա-  
ժողովի ապրիլ 4ի նիստին մէջ



«սա հայու կտորը ժողովրդական ըլլալ կսկսի կոր» ըսելով:

Մէկէն ի մէկ Լէօն Ֆէհմիին անունը ալ չեղեցաւ եղբայրական մամուլին մէջ մէկ քանին միայն ծանուցին թէ Բօր-Սայիտէն Մարտիկի մեկներ է եւ ալ չխօսուեցաւ այդ բաղդախնդիրին վրայ բայց խնդրին մօտէն տեղեկութիւն ունեցողներուն քով միշտ սա հաւատքը անխախտ մնայ թէ խտիվը զայն ուրիշ 7-8 երիտասարդ թուրքերու հետ Պոլիս զրկած է գաղտնի:

Անցեալները «Ֆէրեատ» անունով թրքերէն խեղճ ու կրակ թերթ մը ստացայ որու խմբագիրը Ալէքսան-Ֆէհմիին եղբայրը—կը յայտարարէր թէ «հակառակ չըլած լուրերուն դեռ եղբորը վրայ ոեւէ լուր առած չէ եւ փաստերով համոզուած է թէ եղբայրը այժմ Պոլիս սոսկալի չարչարանքներու մէջ է, ինք իր բոլոր արիւնը պիտի թափէ իր եղբորը խորհրդաւոր առեւանգումը լուսարաններու համար եւ երբէք բանի մը առջեւ չպիտի ընկնի ոճրագործները (խտիվին կակնարկուէր) զիմկազերծ ընելու համար»:

Կարծիս թէ «Ֆէրեատ»ը իր առաջին թիւէն յետոյ ձայն ձուռ չի հանեց:

Լ. Օ.

ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր,

Պուրկազի կարգ մը ձրիակերներու հրապարակում կեղծաբարութեան առթիւ, ստուգութեան համար պէտք եղած ամեն միջոցներու դիմելով, կարողացայ վերջնական եզրակացութեան յանգիլ եւ իրողութիւնը ճշմարտապէս ստուգել: Առ այժմ խնդիրը կը ծանրանայ Հայ Յ. Դաշնակցութեան Պաշտանի ներկայացուցչին վրայ, որուն անցուղարձէն տեղեկ եւսմասմբիւր խորհրդով եղած ըլլալը հետեւեալ փաստերը կը հաստատեն: Տ. Մակար Յովհաննէսեան անուն անձը որ Ֆիլիպէ—Պուրկազ ճանապարհին վրայ գտնուած կաշարաններու մէջ խաբէութիւնը ծայրայեղութեան հասցուցած է ու յաջողած է բաւական դրամ շորթել, որ Փ. Պօլսոյ կոմիտէի անունով եղած է եւ զրամները հոն զրկելու խոստումներով գանձուած է: Բ. հարիւրաւոր վկաներ կը հաստատեն խաչագող Մակարին սա խօսքերը թէ երկրի մէջ Դաշնակցու-

թերնց արտակարգ ձերբակալութեան վրայ խօսելու...:

— Ա՛խ, Տէր Օհան, բանտարկութիւնս չէ որ հոգիս կը դառնացնէ, մրմնջեց Ռէս Մէլիք՝ արտասուածոր աչքերուն տանելով իր զոդողուն ձեռքերը՝ բոլոր ցաւս, բոլոր մտածումս վանականին համար է: Երբէք այսքան ուշացած չէր: Մանաւանդ ո՛ր երթալուն վրայ այս անգամ յայտնութիւն մը չըրաւ: Երկու ամիսն անցաւ... Գիտէ՞ք արդեօք մեր հոս զրանուիլը: Միայն ողջ ըլլալուն լուրն առնէի՞ր... ա՛լ բաւական է:

— Աստուած վանականին հետն է, Ռէս Մէլիք, ընդհատեց Տէր Օհան: Կարելի է մեր զոդութիւնը չծանրացնելու համար, ստիպուած է իր գոյութիւնը ծածկել: Բան մը՝ զոր ատանկ ազնիւ հոգի մը կրնայ մտածել շատ պարզ եւ շատ շրջահայեաց կերպով:

— Հաւատալի է այդ, վրայ բերաւ Ռէս Մէլիք:

Այս խօսակցութեան միջոցին բանտապահը մօտենալով՝ ըսաւ.

Թիւնը միայն կը գործէ ուժ տալու էք եւ եթէ ձեր մէջ փափագողներ կան կը զրկեմ, որ սակայն քանի մը միամտներ միայն համոզելով զրկած ու զժաղգ ըրած է: Գ. Մակար, Պաշտանեան ներկայացուցչին հետ քանի մը օր խորհրդակցելէն վերջն է որ կայարան մը հորորող անգամը ըլլալով կերթայ ու հաւաքուած զրամ մը չորթելու ամեն ճիգ գործ զննել վերջ, կը վաճառուի ամօթալի կերպով:

Ինչ անուն տալ կազմակերպութեան մը որ Մակարներ եւ իր նմանը Նէվ-րուզներ տակաւին կը պահէ իր ծոցին մէջ, որոնց նկարագիրը վաղուց արդէն ծանօթ եղած է ժողովրդին, կրնան ուրանալ, որ այս ձրիակերները մասնաւոր անհատներ չեն, այլ Դաշնակցական ենիչէրիներ:

Պուրկազի միջոցաւ այս անպիտաններէն ե՛րբ պիտի մաքուրի. 28 սնտուկի անոնի խաչագողութիւնը տակաւին չը մոռցուած, երկրորդ մը կը յաջորդէ, արդեօք հայ ժողովուրդը զարձեւ աւտարբեր պիտի գտնուի իր ցեցերը մաքրելու ամենակարեւոր պարտականութեանը մէջ:

Սիւնցի

Պուրկազ, 16 Ապրիլ 1902

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս չարթու Պոլսոյ Պատրիարքարանի մասին ոչ մէկ կարեւոր լուր չունինք տալու: Պոլսական թերթերը իրենց ազգային լուրերու բաժինը լցուցած են Զատկական տօներուն տոթիւ տեղի ունեցած շնորհաւորական փոխադարձ այցելութիւններու պատմութիւններով, որոնցով մեր ընթերցողները այնչափ չեն հետաքրքրուիր: Այդ տօներու պատճառաւ վարչական ժողովները չեն գումարուած. հետեւաբար լուծիլ խնդիրները իրենց նախկին վիճակին մէջ կը մնան:

— Ս. Զատիկ տօթիւ սովորական այցելութիւններէ զերծ մնալու նպատակաւ, Որբախնամին հետեւեալ նուիրատուութիւնները եղած են:

— Մերունի մը եկած է եւ տեսնել կուգէ ձեզ:

— Կը խնդրենք, Հասան աղա՛, առէ՛ք հոս բերէք զինքը:

Բանտապահ Հասան աղան, առանց առարկելու գնաց եւ քիչ յետոյ ծերունիի մը հետ վերադարձաւ:

Եկող ծերունին՝ Լաիզարին հայրն էր:

Ռէս Մէլիք մէկէն ի մէկ չճանչցաւ: Անոր երեսը նայեցաւ ուշադրութեամբ ու յետոյ ճանչցաւ...:

— Դուք այստե՞ղ... բացաճանչեց Ռէս Մէլիք խղիւղելու մօտ ձայնով մը:

— Առէ՛ք այս նամակը... մրմնջեց Միքո ախպար ծածուկ կերպով մը. ան ատեն ամեն բան կը հասկնաք: Ես կերթամ: Բանտապահը թո՛ղ չկատկածի:

Ու ծերունին մեկնեցաւ բանտապահին հետ, որ կը սպասէր՝ քիչ մը հեռուն կեցած: Ռէս Մէլիք փուճ տեղ բացաւ թուղթը, փուճ տեղ աչխատեցաւ զոնէ՛ տող մը կարգալու, ո՛չ, չկրցաւ: Խաւարը շատ թանձր էր չվաքին մէջ:

Տ. Տ. Մանուկ Նարեան 5 Փր. Սիսակ Մարտիրոսեան 1. Միմէոն Պէնլեան 2. Կարապետ Գասապեան, Բօզկրատ 3. Ս. Ետիս Գ. Գալֆայիս Մէճիտիլէ 3:

Գումար 14 Փրանք:

— Ս. Զատիկի առաւօտ եկեղեցւոյ բակը դրուած Որբախնամ մի պնակէն գոյացած է 67 Փր. 90 սանդիւմ:

— Արմաւիրէ կը գրեն թէ հիւսիսային կողմափա բնակող հայ գաղթականներէ ոմանք ճամբայ ելած էին թիւրքիա երթալու որ իրենց հողերուն տէր ըլլան. բայց թուրք պաշտօնեաները զանոնք սահմանէն ներս չեն ընդունած, որով ստիպուած են մեր խեղճերը կէս ճամբայէն ետ դառնալ:

— Նշանաւոր հայ երաժշտապետ Գարա—Մուրզա՝ որ իր մասնաճիւղին մէջ շատ օգտակար եղած է ուսուցիչ մեր ազգայնոց, մեռած է հազիւ 40 տարեկան:

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Վ. Մ. Հիւսսիւն. — Ձեր ապրիլ 13 թուակիր նամակին պարունակութեան ճշգրտութիւնը կը հաստատենք:

Տ. Ա. Շահնիւր. Նեիլ Պրիքըն. — Ձեր թերթերը կանոնաւոր կը զրկուին եթէ հասցէին մէջ թերութիւն մը կայ իմացուցէք: Կը գանձենք 4 1/2 տուրք:

Տ. Մ. Յովհ. Սօֆիա. — Ստացանք 18 Փր. Երեք բաժանորդաց վեցամսեայ ի հաշիւ:

Տ. Ահեճիս Գրիգորեան Պուրկազ. — Ստացանք ձեր Վրաց նամակը: Մեր ստացած տեղեկութիւնները ձեր կարծած աղբիւրէն չեն բղխած. հետեւաբար կարծիքնիդ սխալ եւ յարձակումնիդ անիրաւ է: Մեզ հասած տեղեկութիւնները կը հաստատեն որ նոյնիսկ դուք շատերու խոստովանած էք թէ քեզ խաբողը Մուրադը եղած է, եւ միւսներն ալ ձեզ յայտնած են թէ Մակար Յովհաննէսեանէ եւ Նէվ-րուզէ խաբուած են: Իբր նոր փաստ տես այսօրուան Պուրկազի նամակն ալ:

Տ. Մ. Ս. Երկանեան Բեօսթանէ.

— Ա՛խ, ո՛վ կրնայ սպասել մինչեւ որ սա անիծեալ հողէ ճրագը վառուի, մրմնջեց Ռէս Մէլիք: Ինչ ընենք... ճառագայթ մը անգամ չենք կրնար գտնել, Աստուած իմ, ինչ զժաղգութիւն է այս:

Ու սրտին ցաւէն թուղթը կը ճըմրդկէր ծեռքին մէջ, կը ճգմէր ու անհանգիստ շարժումներ կընէր:

Վերջապէս քառորդէ մը ետքը բանտապահն եկաւ ու հողէ ճրագը վառեց: Երբ բանտապահը հեռացաւ, Ռէս Մէլիք ճմրդկուած թուղթը բացաւ եւ անա՛ ինչ որ կարդաց:

«Իմ մասին հոգ մ'ընէք: Ապահով տեղ մը կը գտնուիմ այս պահուս: Եթէ յաջողիմ, պիտի կրնամ անձամբ տեսակցութեան գալու: Կառավարութիւնը չկրնար ձեռք ձգել Լալեզարը...»

— Տեսա՞ք, Ռէս Մէլիք, գոչեց Տէր Օհան ուրախութեամբ մը, չըսի՞ր թէ Աստուած կառաջնորդէ վանականին քայլերը...:

Իրաւունք 14 Փր. գապու: Հէր պիր նօմէրօյր այրր ալմագ իչիւն սէնէլիք 16 Փր. էօմէմէնիզ լազըմ տեր:

ՆԿԱՐԻՉ-ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Թէեւ Տօպրիչը Պուրկարայի պըզտիկ քաղաքներէն մէկն է ուր նկարչութեամբ եւ լուսանկարչութեամբ կը պարապիմ, չը նայելով որ գտնուած չըջանակս ալ շատ յարմար չէ մեծ յառաջդիմութեան, բայց միշտ աշխատած եմ արուեստիս գիտական եւ արուեստական ամենավերջին կատարելապարտութեանց քայլ առ քայլ հետեւելու, որուն շնորհիւ այսօր ունիմ ամենավերջին կատարելութեամբ օժտուած գործիքներ, որոնց հետ միասին շնորհիւ նաեւ նկարչութեան արուեստիս, այսօր կարող եմ արտագրել ակունքներս ամենակատարելագործութեամբ պատկերներ, այս ճիւղը մասնաւոր կերպով մշակած եմ, որուն մէջ նկարչութիւնը մեծ դեր ունի:

Ըսածս հաստատելու համար ձեր մէկ լուսանկարը զրկեցէք իմ հասցէիս եւ պիտի ստանաք անոր մեծադիրը, օրինակին ճիշդ նման, միայն 15 Փրանքի փոխարէն. այն ալ ստանալէ եւ հաւանելէ վերջ վճարելու պայմանաւ:

Իսկ անոնք որ կտաւի վրայ իւղաներկ, բնական գոյներով պատկերներ կուզեն ունենալ, պէտք է ընդհանուր գաղափար մը տան իրենց գոյներն նկատմամբ, (երեսի, աչքերու եւ մազի ընդհանուր գոյնը) ու պիտի ստանան բնական մեծութեամբ իրենց պատկերը 35 Փրանքի փոխարէն, կըրկին վերոյիշեալ պայմաններով:

Թէեւ շատ տեղեր ակունքներս պատկերներ կը պատրաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ եւ ոչ մէկը այնչափ կատարելագործութեամբ կրնայ ըլլար որչափ նկարչի մը պատրաստածը: Վասն զի առանց կանոնաւոր ուղրուշի ոչ մէկ ակունքներս արժէք կրնայ ունենալ:

Միամ յարգանք

Ն. ՄԻՍԿԵԱՆ

Նկարիչ Ֆօթօկրաֆ

(Տօպրիչ)

— Իրաւունք ունէիք, Տէր Հայր... թոթովեց Ռէս Մէլիք: Ա՛լ հող չեմ ըներ: Աստուած կը պաշտպանէ մեզ:

Երկուքն ալ ուրախութեամբ լեցուած բաւական խօսեցան, մինչեւ որ նստած տեղերնին քնացեր էին՝ իրարու կողքին զրուցեան մը մէջ:

Գիշերուան ժամը չորսին մօտ, ոստիկան մը ու հարցաքննիչ դատաւոր մը չվաքը մտան ու այս երկու ազնիւ անձնաւորութեանց մօտենալով բաւական ուշադրութեամբ դիտեցին:

Յետոյ ոստիկանը կամաց մը Ռէս Մէլիքին ձայն տուաւ:

Տէր Օհան եւ Ռէս Մէլիք արթնացան:

— Քանի մը հարցումներ պիտի ընենք ձեզի, ըսաւ հարցաքննիչ դատաւորը մեղմութեամբ մը:

— Պատրաստ ենք, պատասխանեցին Տէր Օհան եւ Ռէս Մէլիք:

(Շարունակելի)

ፆኮኮፍኮሀ

— Բուս-թիւրք մուհարէպէսի  
էսնասընտա զարար թիտէ օղն բուս  
թապաւարընա էօտէնմէսի լազըմ  
կէէն թազմնաթըն էօտէնմէյուպ  
թէէիսի օլընմասը սէպէպլէ, պու

ፊኒክስ

— Մ. Տանեկ Ֆիրմիլեանն մէ  
սէկէսիսին բեք հէմմիթէթի օր  
մատողընը մէզբիւր մուկպիր  
սեօյլէյուպ , Դուլկարիատա պո  
մէսէլէսին ալէֆլէսմէսի Մաքէթո  
նիալըլարըն թէլլիքինէ համ իթ  
միշ իմիշ : Յագաթ հիւքիմէկ  
թարաֆտարընըն տալսի Ֆիր  
միլեանըն թագտիսինէ գարշը շէտի  
տէն լըթթէսթ իթմէլէրի նէյէ համ  
իթմէլի , Բուսիանըն հէր հալտ

# ՍԵՐՊԻԱ

h þ u l h u

3 P U. 6 U U

Քոնստերվաթօր զանտիտաւարըն  
տան Ս. Կիւլապէր զազանամա

Մուխամեթ Ֆերգալարըն կազմե-  
լալարը ինթիսապսթըն ակմէրէ.  
սենի տահա Ֆարգլը կէօսթէրի.  
յօրլար. հանի հիւքիւմէթ գան.  
տիտալարընտան 186 վէ յուրա.  
լիֆ Ֆերգալարտան 213 քիշի  
գազանտը տէյօրլար :

ሀዐኔ ቅደረፋሮህያ

ՍԹԱՄՊՈԼ, 18 Ապրիլ

Ուղիքան Պուկար Էֆզարբը  
Այնն. Տ. Ժողեֆէ Օսմանիյէ պի.  
Բիննի մուրասսա նիշանընը Իհտա  
Իթտի :

ԲԱՐԻՉ, 19 Ապրիլ

Պանգէր Հօսքիէ Բարիզ Պան.  
գասաւնն տիրէքթօլաւար իլէ պուլ-  
կար իսթիգրազը իշիւն աթիտէքի  
չէրաիթի գարաւաշտորտը .

ԹԻԼԹԻՆ ՍՈՆՈՐՈՐ 4 ԵՄԻՍՈՆ 5  
 ԿՈՒԼԿԱՐ ՄԵՄՈՐԻԱՐՈՒՆ ԻՄԱՐԵ Օ-  
 ԼՆՆԱՃԱԳ ՎԵ ԿԱՆԳԽԱՐՐՆ 2 ՄՈՒ-  
 ՐԱԽԱՍԼԱՐՐ ՄԵԿՔԻՐ ԻՄԱՐԵԼԵ ՄԻՒՍ-  
 ԹԵԿԱՐ ԱՐՓԱԹՐ ԻԼԵ ՆԵՂԱՐԵԹ Ի  
 ՄԵՆԵՔԼԵՐ :

Պու շարթուր իւզերինէ պու-  
կար մինիսթիրլէրի պանգէրլէր իւն  
հէմէֆքեար տորլար :

Լճիսիւսը 83 տէն 84 օրաճաղ  
տրր :

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԻՔ, 20 Ապրիլ

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղասընտա իբլիք սա  
Թըշլարը :

|                     |            |       |
|---------------------|------------|-------|
| Ինկիլի Իբիկի Դ.     | 8-14       | 9. 50 |
| »                   | » Ե. 18-24 | 12. — |
| Եէրլի Իբիկի         | Ե. 8-14    | 9. —  |
| Աթլըլը Բամուր Կօրդա |            | 2, —  |

ՍԱՐԲԱՖԻՅԷ

Նաբոլէն 22 ֆրանք 65 սանթ.  
Օսմ. լիբասը 23 ալթուհ ֆրանք

ጣሊያዊ ሥልጣን

Վարնա բիացասընտա պաղգալիյ  
մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալ  
թոււն ֆրանք իլէ :

|                      |            |
|----------------------|------------|
| ԳԱՀԱԿԷ               | 1.50/1.70  |
| ՇԵԿԷՐ ՆԷՎԳԷ          | 5          |
| » (ԳԷՏԱԷ) սահմանը    | 27.4       |
| ԲԻՐԻՆՃ Զարոն չուղալը | 35-3       |
| » ՖԻԼԻԿԷ »           | 32.-       |
| » ԻՆԿԻԼԻԿ »          | 25.2       |
| » ԲԻԳՈՆ »            | 45.-       |
| ԿԱԶ Սահմանը          | 6.7        |
| ԶԵՅԹԻՆ ԵՆԱՂԸ քիլո    | — .85/— .9 |
| ԳՈՒՐՈՒԻ ԻՆԶԻԻՄ       | — .3       |



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ


 Եթէ կռգէք հագնիլ կօշիկներ որոնք իրենց վրայ միացունեն ձեռք եւ զիմաց կունութեան կատարելութիւն եւ մանաւանդ գին չափաւորութիւն, առանց վարանելոյ գիրնցէք Ս. Խօրասանճեանի, Մուսլլա, Տօքթ. Պատասովլըշի տան գրմաց:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна